ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 58

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

12-ը մարտի 2022թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 31-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում:
   /Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյան/
2. ԵՊՀ ԻՄ 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հասատատում:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Դավթյան /
3. 2022-2023 ուստարվա ԵՊՀ ԻՄ ուսման վարձավճարների չափերի քննարկում:
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյան /
4. ԵՊՀ ԻՄ-ի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին ։
   /Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյան/
5. Ընթացիկ հարցեր։
   5.1. ԵՊՀ ԻՄ-ում ներքին դրամաշնորհային մրցույթ հայտարարելու մասին։
   /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյան /
   5.2. ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ նախագահի պաշտոնում Անի Թիրաբյանին հաստատելու մասին: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ նախագահ Մ. Ասիլյան /
   5.3. ԵՊՀ ԻՄ-ի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ ֆ.մ.գ.թ. Ջ.Լ.Սրապիոնյանին և ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մ.գ.թ. ասիստենտ Լ. Մ. Հարությունյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին։
   /Զեկուցող ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյան/

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում

- Հաստատել նիստի օրակարգը։

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը: Նա նշեց, որ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի գիտխորհրդի նիստերի ժամանակացույցի նախագիծը բխում է ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագիրից, քննարկվել է ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումների ղեկավարների հետ, ներառված են հարցեր նաև ԵՊՀ համապատասխան ժամանակացույցից:

Արտահայտվեցին –ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, պրոֆեսոր Մ. Միքայելյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը - առաջարկվեց բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատման հարցը հունիս ամսից տեղափոխել մայիս ամիս և հաստատել գիտական խորհրդի 2021-2022՝ ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 58/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հասատատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք 15 անվանական կրթաթոշակ, ներկայացվել է 13 թեկնածու՝ երկու տեղ մնացել է թափուր: Նշվեց, որ մանդատային հանձնաժողովը մանրակրկիտ ուսումնասիրել է հարցը, մանրամասն հաշվի է առնվել նաև ուսանողների ակտիվությունը, ամեն ինչ արվել է համաձայն ԵՊՀ ԻՄ –ում գործող

իրավական ակտերի: ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացված 13 անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների ցուցակը՝ տես հավելված 2-ում:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը առաջարկեց հաստատել 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 58/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

Օրակարգի երրորդ՝ « 2022-2023 ուստարվա ԵՊՀ ԻՄ ուսման վարձավճարների չափերի քննարկում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը:

Նա նախ ներկայացրեց անցած տարվա վարձավճարների փոփոխությունները, այնուհետև նշեց, որ մեր ունեցած մասնագիտություններով ԵՊՀ ԻՄ- ը համեմատած ՀՀ այլ բուհերում գործող վճարների հետ համեմատ ունի ամենացածր վարձավճարների չափը: Ա. Մակարյանը նշեց, որ այս հարցը քննարկվել է նաև տնօրինության նիստում, որտեղ որոշվել է բոլոր մասնագիտություններով վարձավճարերը բարձրացնել 20000 ՀՀ դրամով, հաշվի առնելով ՀՀ-ում առկա գնաճը: Ա. Մակարյանը նշեց, որ միջազգային փորձը ցույց է տալիս, որ տարբեր ֆակուլտետներում դասախոսները կարող են ստանալ տարբեր աշխատավարձեր, հավատարմագրման փորձագետները ԵՊՀ-ին խորհուրդ են տվել ֆինանսավորումը կատարել ըստ կրթական ծրագրերի, դիտարկելով դրանք որպես բիզնես ծրագրեր, և եթե բուհի համար շահավետ չէ իրականացնել որևէ կրթական ծրագիր, ապա դա չպետք է իրականացնել:

Ներկայացված նախագիծը կարող եք տեսնել հավելված 3-ում:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր

տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ. Միքայելյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, մ.գ.թ. դոցենտ Լ. Ֆլջյանը, ուսանողներ Մ. Ասիլյանը, Հ. Թամամյանը, Գ. Խաչատրյանը և այլոք:

Արտահայտվողները նշեցին, որ չնայած վարձավճարները հավաքվում են դժվարությամբ, սակայն հնարավոր չէ առանց վարձավճարների բարձրացման իրականացնել բարձրորակ կրթություն, ունենալ վերանորոգված լսարաններ և լաբորատորիաներ, արժանավայել աշխատավարձ և այլն:

Նշեցին, որ Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները անհրաժեշտ նյութերի ձեռքբերման համար ծախսում են որոշ գումարներ, որոնք նրանք կարող են ձեռք բերել իրենց աշխատանքների վաճառելու միջոցով:

Նշվեց նաև որ, եկող տարվա համար կատարվող աշխատանքների նախագծում արդեն կա կիրառական արվեստի ֆակուլտետի լաբորատորիաների և արվեստանոցների սարքավորումների թարմացման հարցը:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ արդյունքներով, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 58/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 10-րդ և 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 10-րդ և 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ 2022-2023 ուստարվա ԵՊՀ ԻՄ ուսման վարձավճարների չափերի նախագծին՝ համաձայն հավելված 3-ի:
2. Նախագիծն ուղարկել ԵՊՀ հաստատման:

Օրակարգի չորրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ սույն նախագիծը (տես հավելված 4) նախօրոք ուղարկվել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի բոլոր անդամներին և գրավոր առաջարկներ չեն եղել:

Նա նշեց, որ համապատասխան կարգը խմբագրվել և հաստատվել է նաև ԵՊՀ –ում, այն դարձել ավելի հստակ, գումարային առումով գրեթե ավելացումներ չեն եղել: Մենք վերցրել ենք գրեթե նույն կետերը, իսկ գումարները որպես կանոն վերցրել ենք ԵՊՀ նախատեսվող լրավճարների 2/3 մասի չափով, բացի այդ կան կետեր, որ ԵՊՀ ԻՄ-ում կան, բայց ԵՊՀ համապատասխան կարգում չկան՝ կետ 12. «Պաշտպանությունից առաջ վերջին երկու տարում ԵՊՀ ԻՄ-ում առնվազն 20 ամիս աշխատող և 35 տարին չլրացած հայցորդի (ասպիրանտի) ատենախոսության

պաշտպանություն» - 100 000 դրամ, կետ 13. «Պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչման ստացում» - 100 000 դրամ։

Մ. Աթոյանը նշեց, որ աղյուսակ 1-ում սահմանված աշխատանքների կատարման համար, ԵՊՀ ԻՄ աշխատողին վճարվող լրավճարի տարեկան առավելագույն չափ է սահմանվել 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը՝ հին կարգում եղել է 500 000 ՀՀ դրամ, խմբագրված կարգով նախատեսվում է նաև աղյուսակ 1-ի 1-9-րդ կետերով սահմանված աշխատանքների համար լրավճարները վճարել ըստ եռամսյակների, աղյուսակ 2-ում սահմանված աշխատանքների կատարման համար, ԵՊՀ ԻՄ աշխատողին վճարվող լրավճարի տարեկան առավելագույն չափ է սահմանվել 500 000 (հինգ հարյուր հազար)ՀՀ դրամը՝ հին կարգում եղել է 300 000 դրամ։

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլոք։

Արտահայտվողները կարևորեցին այս փաստաթղթի առկայությունը, կատարված փոփոխությունները և առաջարկեցին հաստատել։

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 58/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 28-ի 42/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը» նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 4-ի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

Ընթացիկ հարցեր։

5.1 Լսեցին՝ « ԵՊՀ ԻՄ-ում ներքին դրամաշնորհային մրցույթ հայտարարելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը։

Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ –ը հաստատել է իր համապատասխան կարգը և հայտարարել էր դրամաշնորհային մրցույթ, սակայն մասնաճյուղից ոչ ոք չի դիմել մրցույթին մասնակցելու համար։

ԵՊՀ ԻՄ-ի նախահաշվում այս տարվա ներքին դրամաշնորհների համար հատկացված է 3 միլիոն ՀՀ դրամ։

ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը նշեց, որ այս տարի ԵՊՀ ռեկտորի թույլտվությամբ ներքին դրամաշնորհային մրցույթը կիրականացնենք սահմանված ընթացակարգով՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի և գիտական քարտուղարի պատասխանատվությամբ։ Այդ տեսակետից ոչ էական փոփոխություններ են կատարվել մրցույթի հրավերի փաթեթում։ Մրցույթի պայմանների և ժամկետների մասին մանրամասն կարող եք տեսնել հավելված 5-ում։

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ 58/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է

1. Ներքին գիտական դրամաշնորհների ֆինանսավորման նպատակով կազմակերպել գիտական թեմաների հայտերի մրցույթ։
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն հավելվածի։
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից։

5.3 **Լսեցին՝** « ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ նախագահի պաշտոնում Անի Թիրաբյանին հաստատելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ նախագահ Մ. Ասիլյան հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում կայացել է ՈՒԳԸ նախագահի ընտրություններ, որի արդյունքում ՈՒԳԸ նախագահի պաշտոնում ընտրվել է Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի Անի Թիրաբյանը, որը ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ փոխնախագահի պաշտոնում առաջադրել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի Իննա Թիրաբյանին, իսկ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ քարտուղարի պաշտոնում Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի Լիդա Ցուցուլյանին։ Այնուհետև Մ. Ասիլյանը առաջարկեց հաստատել ՈՒԳԸ կողմից ընտրված թեկնածուներին։

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, ԵՊՀ ԻՄ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլոք։

Արտահայտվողները շնորհակալություն հայտնեցին Մ. Ասիլյանին ՈՒԳԸ նախագահի պաշտոնում արդյունավետ գործունեության համար և հույս հայտնեցին, որ նորընտիր ՈՒԳԸ նախագահը նույնպես արդյունավետ կաշխատի։

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին*

ՈՐՈՇՈՒՄ 58/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017թ. հոկտեմբերի 28-ի թիվ 27 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերության կանոնադրության 3.14 կետով՝ հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ գիտական խորհրդի 04.03.2022 թ.-ին կայացած 2-րդ նիստի որոշումը՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահի պաշտոնում Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի Անի Թիրաբյանին։
2. Հաստատել ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ փոխնախագահի պաշտոնում Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի Իննա Թիրաբյանին։
3. Հաստատել ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ քարտուղարի պաշտոնում Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողուհի Լիդա Ցուցուլյանին։
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

5.3 **Լսեցին**՝ «ԵՊՀ ԻՄ-ի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ ֆ.մ.գ.թ. Ջ.Լ.Սրապիոնյանին և ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մ.գ.թ. ասիստենտ Լ. Մ. Հարությունյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին›› հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

Մասնավորապես Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի 2022թ. հունվարի 11-ի թիվ 6 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ջ.Լ.Սրապիոնյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և, հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները, նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ,

ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ջ.Լ.Սրապիոնյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ջ.Լ.Սրապիոնյանը ԵՊՀ ԻՄ-ում համատեղության կարգով աշխատում է 2018թ.-ի սեպտեմբերի 3-ից մինչև 31.08.2020 0,5 դրույքաչափով, իսկ 2020թ.-ի սեպտեմբերի 01-ից առ այսօր 0,25 դրույքաչափով:

Ջ.Լ.Սրապիոնյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2016թ.-ին: Նա ունի 11 աշխատանք (1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 10 հոդված), որոնցից ուսումնամեթոդական ձեռնարկը, 1 գիտական և 2 ուսումնամեթոդական հոդվածները հրատարակել է թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ջ.Լ.Սրապիոնյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու համար:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի 2022թ. փետրվարի 04-ի թիվ 6 նիստում քննարկվել է «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և, հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները, նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանը 1999թ.-ի սեպտեմբերի 1-ին ընդունվել է աշխատանքի ԵՊՀ ԻՄ-ի «Օտար լեզուների» ամբիոնում, որպես դասախոս, 2011թ.ից՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2016թ. սեպտեմբերի 1-ին նշանակվել է ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության

ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար և աշխատում է առայսօր։ Լ. Մ. Հարությունյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2016թ.-ին։ Նա ունի հրատարակված 15 հոդված, որոնցից 4-ը՝ գիտական և 2 ուսումնամեթոդական աշխատանք հրատարակվել են ատենախոսության պաշտպանությունից հետո։

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու համար։

Մ. Աթոյանը նշեց, որ Ջ. Լ. Սրապիոնյանի և Լ. Մ. Հարությունյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի 2)-րդ ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, և առաջարկեց երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ ֆ.մ.գ.թ. Ջ.Լ.Սրապիոնյանին և ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մ.գ.թ. ասիստենտ Լ. Մ. Հարությունյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու համար։

Այնուհետև փակ գաղտնի քվեարկություն կազմակերպելու համար առաջարկվեց կազմել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Մ. Ճաղարյան, Ա. Դավթյան, Գ. Խաչատրյան։

Բաց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, **որոշվեց**.

- ➢ Հաշվիչ հանձնաժողովի կազմում ընդգրկել ներքոնշյալ անձանց.
- ✓ ՄԿՈԱ բաժնի վարիչ՝ Մ. Ճաղարյան,
- ✓ Ուսումնամեթոդական վարչության պետ՝ Ա. Դավթյան,
- ✓ ՈՒԽ նախագահ՝ Գ. Խաչատրյան։

Այնուհետև կազմակերպվեց փակ գաղտնի քվեարկություն, որի արդյունքները ներկայացրեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Մ. Ճաղարյանը։

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով՝ ԵՊՀ ԻՄ-ի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ ֆ.մ.գ.թ. Ջ.Լ.Սրապիոնյանին քվեարկել էին կողմ 29, դեմ 0, անվավեր 2, ԵՊՀ ԻՄ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մ.գ.թ. ասիստենտ Լ. Մ. Հարությունյանին քվեարկել էին կողմ 15, դեմ 14, անվավեր 2։

Այնուհետև բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, **որոշվեց**.

- ➢ Հաստատել փակ գաղտնի քվեարկության արդյունքները։

Այսպիսով փակ գաղտնի քվեարկության արդյունքներով որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ N 58/7

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ջ. Լ. Սրապիոնյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի 2)-րդ ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ջ. Լ. Սրապիոնյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ջ. Լ. Սրապիոնյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

ՈՐՈՇՈՒՄ N 58/8

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 4-րդ՝ «Գիտական կոչումների շնորհումը» բաժնի 9)-րդ ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներով, ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը որոշում է.

- Չերաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ